

## ՀԱՐՑԱՇԱՐ

### «Ժուռնալիստիկայի պատմություն» առարկայի

### «Լրագրություն» մասնագիտության մագիստրատուրայի

(առկա և հեռակա ուսուցում)

1. Ժուռնալիստիկայի զարգացման փուլերը:
2. Հռետորական արվեստն իբրև լրատվության տարածման ու ժողովուրդների ներքին ու արտաքին կյանքը կարգավորելու բանավոր միջոց Հին Հռոմում ու Հունաստանում, Մերձավոր ու Միջին Արևելքում:
3. Ժուռնալիստիկայի սկզբնավորումը աշխարհում. զանգվածային գրատպության և թղթի մուտքը եվրոպական երկրներ:
4. Լրագրության ծագման նախադրյալները՝ ինֆորմացիոն, սոցիալական, հոգևոր-մշակութային, նյութատեխնիկական:
5. Տպագրական մեքենայի գյուտը Գուտենբերգի կողմից, գրատպագրության ծաղկումն ու զարգացումը Եվրոպայում:
6. Ժուռնալիստիկայի զարգացմանը նպաստող և խանգարող պատճառները:
7. Հասկացություն ՁԼՄ տիպաբանության մասին: ՁԼՄ-ների զարգացման միտումները, տիպաբանական նշանները:
8. Լրագրողի սոցիալական ստատուսը. լրագրողի մասնագիտությունն իբրև «ամենավտանգավոր» մասնագիտություններից մեկն աշխարհում:
9. Տեղեկատվության ստացման հիմնական միջոցները, գրավոր և բանավոր աղբյուրներ:
10. Ժուռնալիստիկայի սկզբունքները:
11. Ժուռնալիստիկայի հասարակական գործառույթները:
12. Հասկացություն ժանրերի մասին, ժուռնալիստական ժանրախմբեր, առանձնահատկությունները:
13. Ժանրը պայմանավորող գործոններ՝ առարկա, գործառույթ և մեթոդ: «Մաքուր» և «հիբրիդ» ժանրեր:
14. Տեղեկատվական ժանրախումբ, առանձնահատկությունները:
15. Վերլուծական ժանրախումբ, առանձնահատկությունները:
16. Գեղարվեստական-հրապարակախոսական ժանրախումբ, բնութագրիչները:
17. Թերթի ձևավորման առանձնահատկությունները: Դիզայնը որպես թերթի հաջողության կարևոր բաղադրամաս:
18. Ռադիոհաղորդումներ. սկզբնավորումը և այսօրը:
19. Հեռուստահաղորդումներ. սկզբնավորումը և այսօրը:
20. Գրքային հրատարակչություններ: Հայ և միջազգային գրքի անցած ուղին 15-17-րդ դդ. մինչև մեր օրերը:

21. Հայ գրատպությունը հայկական գաղթօջախներում, դրա զարգացման երեք փուլերը:
22. Ներկայիս հրատարակչությունները, ունիվերսալ և մասնագիտացված հրատարակչություններ, դրանց բնութագրիչները, գործունեության առանձնահատկությունները:
23. Լրատվության էլեկտրոնային միջոցները: Ինտերնետն իբրև ինքնակառավարվող հանրություն: Էլեկտրոնային փոստ, Էլեկտրոնային թերթ, առանձնահատկությունները:
24. Գովազդի տեսակները և դրանց բնութագրումը:
25. Աշխարհի խոշորագույն լրատվական գործակալությունները:
26. Հայաստանի լրատվական գործակալությունները, ծառայություններն ու կենտրոնները: